№ 228 Դեկտեմբերի 28 **1879** Դեկտեմբերի 28 № 228

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։
—
Յայտարարութիւնները ընդունվում են միայն խմբագրատան մէջ։
—
Բաժանորդագրութիւնները ուղարկել
Тифлисъ. Редакція „Мшакъ"

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
—
Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով
—
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ

„ՄՇԱԿ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1880 թւին

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԷՆ ՕՐ, բացի տօն և տօների հետևեալ օրերից։

Լրագրի գինը և պայմանները նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԱՀՄԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐ ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 րուբլ է, կէս տարվան 6 րուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

[illegible]

ՕՐՎԱՅ ՀԱՐՑԸ

—

Վերջին տարիները Թիֆլիսում սկսել են ստոէն յաճախ կրկնւել հրդեհներ։ Շատերի կարծիքով լսել ենք հետևեալ խօսքերը. կամե որ կրակի դէմ ապահովութեան ընկերութիւններ չը կային, քանի որ ոչ որ նեղնում իր տունը կամ խանութը չէր ապահովացնում,—երբէք հրդեհներ չէին լինում մեր քաղաքում։

Այդ միտքը ուշադրութեան արժանի է։

Եթէ հնարաւոր կարելի է կասկածել թէ մեր թիֆլիսցիները գիտնական են կրակ դցելու, այդ կասկածը աւելի հաւանական է խանութպանների, քան թէ տանտէրների կողմից։

Ինչպէս յայտնի է անշուշտ կայքը, տունը, մանաւանդ նա, որ գրաւ է դրած Պլրինգում, կամ մի ուրիշ հիմնարկութեան մէջ, երբէք այնքան բարձր գնով ապահոված չէ լինում, որքան ինքն արժէ, կամ մինչև անգամ որքան գնահատված է։ Եթէ մի տուն կամ մի բարեխնամութեամբ արժէ գինը 200.000 րուբլ, նա երբէք 100.000 րուբլուց աւելի չէ ապահովում կրակի դէմ ապահովութեան ընկերութեան կողմից։ Պարզ է, ուրեմն, որ ոչ մի տուն ամբողջ չայրւ չէ. մանաւանդ երբ տունն էլ գրաւ է դրած, կրակ տալ իր կալուածքին և առնելով ընկերութիւնից իր տան արժէքի կէսը և մի մասն էլ տալ այն հիմնարկութեանը, որտեղ գրաւ է դրված տունը։

Բայց վաճառականների մեծ մասը ապահովացնում են իրանց ապրանքները շատ անգամ քան, երևան անգամ բարձր քան թէ այն ապրանքները արժեն։ Մի վաճառական որ խանութում երեք կամ չորս հազարի ապրանք ունի, ապահովացնում է այդ ապրանքը քսան հազարի։ Նա այդ անում է այն հիման վրա, որ թէև այս րոպէիս նա չորս թէ հինգ հազար րուբլու ապրանք ունի, բայց տարվայ մէջ նա առևտուր է անում աւելի քան քսան հազար րուբլու, կամ այն րոպէին, երբ ապահովութեան ընկերութեան ագէնտը ներկայանում է, մաղազինի առէքը մի քանի ժամ՝ այդ համար իր հարևանից փոխ է առնում մի քանի հազարի ապրանքներ որ այդպիսով իր ապրանքները շատ երևան...։

Բայց ագէնտը ուշադրութիւն չէ դարձնում այդ խորամանկութիւնների վրայ։ Ասում են որ ագէնտների մէջ կան և այնպիսիները, որոնք կապեր ունեն վաճառականների հետ, որպէս զի երբ ապրանքները այրւին, իրանք էլ իրանց մասը ստանան....

Մենք չենք հաւատում այդ առասպելին խորէութեան և անհնարութեան, բայց աւելի հակված ենք մտածել որ ընկերութիւնների ագէնտները չափից դուրս բարձր են գնահատում վաճառականի ապրանքը իրանց անհոգութեան պատճառով։

Ագէնտը, տեսնելով մեծ չորս հինգ հազարի ապրանք, վաճառականի խօսքին հաւատում է, որ նա շատով ստանում է նոր ապրանքներ արտասահմանից, կամ Մոսկուայից և որ նրա տարեկան առևտուրը հասնում է քսան հազար րուբլի գումարի։ Բայց ագէնտը իրան նեղութիւն չէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

[illegible]

—

[illegible]

տալիս նոյնիսկ իր կրէնոտ առև-տրական մասնաւորները, կամ, մինչև անգամ հետաքրքրվել և խառնուել, ապակոր ամեն նա առհասարակ, առևտրական գործերը... Այդ գործերից նա կը համոզվի, որքան շահաբեր է, որ վաճառականը տարեկան բաւն հազար ռուբլի գումարի առևտուր է անում:

Յայտնի է, որ մեր վաճառականներից շատերը մինչև այժմ բոլորովին չեն ապահովացնում իրանց ապրանքները, գտնվում են, ի հարկէ, և այնպիսիներ, որոնք ամբողջ կերպով ապահովացնում են իրանց ապրանքները միջոց այն գումարի, որին համեմատ է նրանց տարեկան առևտուրը: Այդպիսով անձերը և ամբիները առևտուր անելով մի և նոյն տան մէջ, որտեղ իրանց խանութ ունեն խարդախ վաճառականները, շատ անգամ զոհ են լինում այդ փորձանքի ապահովութեան և խաբէութեան: Նա որ շատ բարձր գնով է ապահովացրել իր ապրանքները շարժելու գիտաւորութեամբ, կրակ է գցում իր խանութին, իսկ նրա հարևանները, որոնք քիչ են ապահովացրել, կամ բոլորովին չեն ապահովացրել իրանց ունեցածը, կորցնում են ամեն բան հրդեհի ժամանակ և կատարելապէս աղքատանում են:

Այդ տեսակ յանցաւոր շահագործութեան առաջն առնելու համար բոլոր ազնուաւոր վաճառականների պարտքն ու շահը պահանջում է, որ նախ՝ ամեն վաճառական ապահովագրի միջոց և մաքուր առևտրական մասնաւորներ պահէ, երկրորդ՝ որ կրակի դէմ ապահովութեան ընկերութեան ագէնտները երբէք չապահովացնեն ոչ մի վաճառականի ապրանքները նախ քան առևտրական գրքերը չտեսնելը, երրորդ՝ ագէնտը մեր կարծիքով պէտք է ապահովացնի մի վաճառականի ապրանքը ոչ թէ միայն նրա առևտրի տարեկան շրջական գումարը աչքի առաջ ունելով, բայց ի նկատի պէտք է առնի նրա հինգ, մեկ տարվա առևտրի շրջական գումարի միջին թիւը:

Այս, մեր կարծիքով այն գլխաւոր միջոցները, որ պէտք է գործ դնել մեր շահաւոր վաճառականներից մի քանիսների յանցաւոր գիտաւորութիւններին առաջն առնելու համար:

Այս մեր առաջարկութեան վրա թէ մեր վաճառականների, թէ մեր քաղաքային վարչութեան և թէ կրակի դէմ ապահովագրութեան ընկերութիւնների կենտրոնական վարչութիւնների ուշադրութիւն ենք դարձնում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

[illegible] դեկտեմբերի 29-ին [illegible] 1880 [illegible] 15-ին.

—

[illegible]

—

[illegible] դեկտեմբերի 25-ին [illegible] դեկտեմբերի 26-ին [illegible]

—

[illegible] դեկտեմբերի 30-ին [illegible]

—

[illegible] 15—20 [illegible]

—

[illegible] դեկտեմբերի 29-ին [illegible] 15 [illegible]

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԻԱ

—

[illegible] «Times» [illegible]

[illegible]

[illegible] 300 [illegible]

[illegible] 10,000-ը 50,000 [illegible] 80,000 [illegible] 150,000 [illegible] 200,000-ը [illegible] 150,000-ը [illegible] 1867-ին 500 [illegible] 50 [illegible]

[illegible]